ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ապրիլի 2025 թվականի № 13

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 5-ՐԴ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4.1. մասի 9-րդ կետը՝ և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024թ. դեկտեմբերի 12-ի N 1989-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 52-րդ կետի 17-րդ ենթակետով և 61-րդ կետի 8-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. Սահմանել ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող սովորողների նկատմամբ՝

1) Ադրբեջանի Հանրապետության հետ սահմանամերձ գյուղական համայնքներում բնակվող սովորողներին՝ 25 տոկոս,
2) Մարտական գործողությունների մասնակիցներին (ազատամարտիկներ), նրանց երեխա սովորողներին (համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում)՝ 30 տոկոս,
3) ՀՀ ՆԳՆ ծառայողների և աշխատակիցների երեխաներին՝ 40 տոկոս,
4) ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի հաստիքային աշխատող սովորողներին, նրանց երեխա սովորողներին՝ 50 տոկոս:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 5-րդ նիստում հաստատված Հայաստանի Հանրապետության ոստիկանության կրթահամալիրի առանձին կատեգորիայի սովորողների համար ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցում սահմանելու մասին որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատվելու օրվան հաջորդող օրը

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՌԵԿՏՈՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ԻՆՔԸ ԵՎ ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ**